

զբաղան տարազները մէկը, որ պէտք է լինէր *aw*: Այս խմբի մէջ՝ *u* ձայնի ազդեցութեան տակ՝ հետեւորդ *aw* խումբը հնչուած է *uo*, որի հետեւանքով *aw* խումբն արտաբերուած է իբր *uo*: Օ ձայնի կազմութիւնից յետոյ հետեւորդ *i* ձայնը կարող էր սղիլ եւ իբր սղած է երկու ուղղութեամբ՝ իբր *w* եւ իբր *y*, որով *uo* խումբը տուած է *uow* եւ *uoy*: Հնչական հոլովոյթի այս փուլն է, որ զբի է առած Ս. Մեսրոպը: Այնուհետեւ այս խմբերի *u* ձայնը դարձած է *v*³ նրանք հնչուած են իբր *vow* եւ *voy*: Այս խմբերից առաջինը իր *w* ձայնի պատճառով ամփոփուած է իբր *vu*, որ լերկանալով դարձած է պարզ *u* (ու), իսկ երկրորդը միայն լերկացած է եւ հնչուած է իբր *oy*: Հնչափոխական այս միջանկեալ փուլերը իրենց հետքը թողած են բարբառների մէջ. համտ. «վուր կերթաս» արտաբերութիւնը «ուր կերթաս» խօսքի: Գետաբային արտաբերում է *loys* եւ ոչ թէ *luys* (լոյս) եւ այս է բուն արտաբերութիւնը այ գրութեան: Մեր այ արտաբերութիւնը գրութեան չունի. ինչպէս չէր ունենայ օ արտաբերութիւնը եթէ շարունակէինք աւ գրել եւ օ կարգալ:

Մեր այ գրութեան այ արտաբերութիւնը ինքնին հետաքրքրական երեւոյթ է: Խուսափելով շեղումից՝ մենք այս հարցի քննութիւնը առժամայէս յետաձգում ենք: Ու եւ այ լծորդ խմբերի կազմութեան ընթացքը կարելի է այսպէս պատկերացնել.

$$aw \rightarrow uoi \begin{cases} uow > vow > vu > u \\ uoy > voy > oy \end{cases}$$

Պարզ է հոլովոյթի ընթացքը. ձայնախմբերը զնալով ամփոփուում են եւ լերկանում: Այս տարազները պատկերացնում են մեր լեզուի արտաբերական հոլովոյթի փուլերը:

Մենք գտանք երկու տարազ.

$$\begin{aligned} u &= \text{նախադրական} & aw &> vaw \\ u &= \text{նախադրական} & awi &> waw \end{aligned}$$

Այս տարազների ամէն մի ձայնը իր ծագման պատմութիւնն ունի: Այդ պատմու-

³ Եղած է լեզուական միջավայր, ուր սղ. փոխանցումը կատարուած է Ս. Մեսրոպից առաջ, տես վարը «ոյգ» եւ «վէգ» բառերի քննութիւնը:

թեան անցնելուց առաջ կիրարկենք մեր գտած տարազներից մէկը լեզուական երեւոյթներ մեկնելու համար:

Ահաւաստիկ երկու բառ, որ նոյն իմաստն ունին. այգ եւ վէգ: Ո՞վ կարող է ասել, որ սրանք նոյն նախադրական բառերն են, որ տարբեր լեզուական միջավայրերի մէջ, տարբեր հնչական օրէնքների հետեւանքով այսքան տարատեսակ կերպարանք են ստացած: Լուծենք այս բառերը մեր գտած տարազներով: Վերականգնելով այ խումբն իբր *vaw*, այգ բառի նախադրական կերպարանքը մեզ կը պատկերանայ **vawig* ձեւով: Տարբեր արտաբերական միջավայրի մէջ այս բառի *w* ձայնը զնախատուած է իբր *y* եւ բառն արտաբերուած է *vayig* (գիտենք որ *w* եւ *y* լծորդ են): Այս երկրորդ ձեւի մէջ *y* խումբը շեղուց յետոյ դալով ձուլուած է եւ դարձած *y*, որով *vayig* հնչուած է *vayg*, իսկ այս ձեւի մէջ *ay* խումբը ձոյլ արտաբերումով դարձած է *o*, որով բառը հնչուած է *vog*, այսինքն՝ վէգ: Մենք տեսնում ենք, որ սրանք նոյն նախադրական բառերն են, որ տարատեսակ կերպարանք են ստացած միեւնոյն յօրանքի տարբեր զնախատութեան հետեւանքով. մի ցեղ արտաբերած է *w*, միւս ցեղը՝ *y*, այնուհետեւ հնչական հոլովոյթը օրինական ընթացքով ստեղծած է տարատեսակ բառեր — այգ, վէգ:

Պարզ է, որ սրանք մօտաւորապէս նոյն բառերն էին այն ժամանակ, երբ դեռ գոյութիւն չունէին *u* եւ այ ձայնները: Այդ ձայները կազմուած են լեզուական տարբեր միջավայրերի մէջ, ինչպէս եւ այ ու վէգ տարբեր բարբառների բառեր են: Ցեղերի խառնուրդի հետեւանքով նրանք մտած են մի եւ նոյն «գրաբար» լեզուի մէջ, բայց նրանք տարբեր ծագում ունին. նրանցից մէկը կամ միւսը «փոխառութիւն» են «գրաբար» լեզուի հիմքը կազմող բարբառի համար եւ փոխառութիւնը կատարուած է զբերի գիտաց առաջ:

Առնենք նոյնիմաստ բառերի մի ուրիշ զոյգ. ուր եւ վայր. երկուսն եւս «տեղ» են նշանակում: Սրանք թուում են երկու լիովին տարբեր բառեր: Լուծենք այս բառերը մեր գտած տարազներով եւ կը տեսնենք, որ գրանք նոյն բառերն են: Լուծելով ու ձայնն իբր *vaw*, մենք ուր բառի նախադրական կերպարանքը կը ստանանք իբր **vawir*: Լե-

զուական այն միջավայրի մէջ, ուր *w* ձայնը զնախատուում էր իբր *y*, այս ձեւը պէտք է հնչէր **vayir*. շեղուց յետոյ դալով՝ *y* խումբը պիտի տար *y*, որով բառը պիտի դառնար *vayr*, այսինքն՝ վայր: Այս վիճակի մէջ է գտած բառը Ս. Մեսրոպ: Հոլովոյթը շարունակուած է նրանից յետոյ եւ վայր բառի այ խումբը դարձած է *u*, որով բառը բարբառների մէջ հնչում է վէր. համտ. «վէր ընկաւ» (Երեւան). այսինքն՝ «վայր ընկաւ»: Մենք տեսնում ենք երկու տարբեր միջավայր, ուր նախադրական միեւնոյն յօրանքը խցուած է տարբեր ձայներով, որի հետեւանքով «գրաբար» լեզուն միեւնոյն գաղափարի համար զոյգ բառեր ունի *u* ձայնն տարբեր իրարից. այգ, ուր — վէգ, վայր (վէր):

Մի բարբառում այ եղածը միւս բարբառում վայ է: Այս տարբերութիւնը հասած է մինչեւ մեր օրերը. Գետաբային ասում է. *լոյս* — (*loys*, ոչ *luys*). Սուեղացին ասում է. *լայս* (իրօք պէտք է լինէր **լայս*⁴. այս մասին առիթ կ'ունենամ խօսելու): Այս լուծումները պարզ երեւում է, որ մեր գրաբարը մի խառնուրդ լեզու է, որ տարբեր բարբառներից մտած են նոյնիմաստ բառեր, որ սակայն իրենց բնիկ միջավայրում անցած են արտաբերական տարբեր փուլերից եւ ստացած են տարատեսակ կերպարանք: Ուստի վաղաժամ է կարծել, որ մենք գտած ենք գրաբարի հնչարանական օրէնքները եւ համաձայնաբար կ'ընենք: Միեւնոյն նախադրական *vaw* խումբը մենք տեսնում ենք ամփոփուած է'ւ իբր այ (այգ) է'ւ ու (ուր). ամփոփուած է'ւ իբր այ (այգ) է'ւ *w* ձայնով միեւնոյն յօրանքը գոցուած է'ւ *w* ձայնով (*vawig*) է'ւ *y* ձայնով (*vayig*). միեւնոյն *ay* խումբը է'ւ անվթար վիճակում (վայր) է'ւ արդէն ամփոփուած (վէգ): Այսքան տարատեսակ արդիւնքներ չէինք ունենայ, եթէ տեսակ արդիւնքներ չէինք ունենայ, եթէ գրաբարը մի եւ անաղարտ լեզու լինէր եւ ոչ թէ մի քանի նախադրական բարբառների խառնուրդ:

Մեր գտած տարազների կիրարկումով մենք կարող ենք վերականգնել մեր բարբառական տարատեսակ ձեւերի նախադրական մերձաւորութիւնը կամ նոյնութիւնը: Ահաւաստիկ միեւնոյն բառի տարբեր ձեւերը.

⁴ Այս ձեւի *y* ձայնը ազդած *i* ձայնի հնչումով վրայ, որ արտաբերուած է թանձր:

u ձայնը, վայր, *վէր («լոյս» բառի մէջ, որ նշանակում է «միջակ»), վայր, վիթի (թիֆլիս, Սայաթ-Նովան գրում է. «Մի՛ վիթի արունդ, Մի՛ շանց տայ մահը» երգ ի): Թէ ինչպէս տարբեր բարբառների բառեր մտած են «գրաբար» լեզուի մէջ եւ ժամանակի ընթացքին ձեռք են բերած իմաստի տարբերացում՝ կարելի է տեսնել բառերի մի նոր շարքից, որ վերը բերածներին գուրդակաւ են. Այսպէս՝ խոքի, խայքի, խէք, կարծում եմ՝ խաք-այել), խիք: Մենք քննութեան կառնենք բառերի առաջին շարքը, որ իմաստի տարբերութիւն չունին, հետեւանքով պէս կարող ենք աւելի վստահութեամբ ասել թէ զրանք միեւնոյն հին բառի ձեւափոխութիւններն են:

Մենք ունինք. *խայր*, *իէր*, *խար*. իբր կազմութիւն այս ձեւերին զուգահեռ են վայր-, *վէր-, վաք- որով կարող ենք վաքի ձեւը մեկնուած համարել, նա նոյն առնչութիւնն ունի վայրի եւ *վէր ձեւերի հետ, ինչ որ ունի *խար* ձեւը *խայր* եւ *իէր* ձեւերի հետ: Մեկնելի մնում են վայրի, *u* ձայնը, *u* ձայնը, *u* ձայնը, որ նախադրական արժէքը տալով, որ է *vaw*, մենք *u* ձայնը *u* ձայնը *u* ձայնը ենք վերականգնել իբր *vawth*, որ *w* ձայնը *y* զնախատող միջավայրի մէջ պիտի հնչէր *vayth*: Այս այն լեզուական միջավայրի համար է, որ այգը վէգ էր եւ ուր-ը՝ վայր: Գալով վիթի ձեւին՝ նա կարող է երկու մեկնութիւն ունենալ:

1. *vawth* եւ *vayth* հին ձեւերի մէջ *w* եւ *v* ձայնները կարող ենք համարել մի նախաւոր *i* ձայնի սղում երկու տարբեր ուղղութեամբ: Այս գէպում մեր վերականգնած հին ձեւերը ծագած կը լինին միեւնոյն նախաւոր ձեւից, որ պիտի լինէր *vayth*: Նոյն այս թերթի մէջ, խօսելով «Սպիտակ» բառի մասին, ես մշակած եմ ձայնաշղթան երկու տարազ, որով *ai* (չեւան *a-ի վրայ*) տալիս է *ay*, իսկ *ai* (չեւան *i-ի վրայ*) տալիս է *i*. այսպէս *փա'իծեղ > փայծեղ. փա'իծեղ — *փի'ծեղ (փի'ցեղ — փիֆլիս). կամ՝ վա'իրագ > վա'յրագ. վա'իրագ — վի'րագ, որ նոյն բառերն են եւ նոյն իմաստն ունին: Այս հիման վրայ կարող ենք ասել, որ *vayth* տուած է *vayth*, իսկ *vayth* — տուած է *vith*, որով վայր եւ վիթ ձեւերը

⁵ Չգիտեմ ինչու Առձեռն բառկերբը գրում է վոքի. տես «վաթիլ» բառի տակ:

ի-ն մնացած է, որ բառի վերջաւորութեան հետ միանալով՝ տուած է iawı, իսկ այս խումբն օրինական կարգով դարձած է ու: Նման դէպքերում ուրիշ լեզուական միջավայրում ոչ միայն չքացած է և-ն, այլ եւ՛ ընկած է յ ձայնը, որով գործիականները դարձած են եաւ, եւ. այսպէս՝ բարիխարի > բարիխաւի > բարեաւ || բարեւ: Այստեղից պարզ է, որ գործիական հոլովի ձեւերը միեւնոյն նախաւոր ձեւից են ծագում եւ տարատեսակ կերպարանք առած են լեզուական տարբեր միջավայրերի մէջ հնչափոխական տարբեր օրէնքների ազդեցութեան տակ. այնուհետեւ իբր պատրաստի ձեւեր, ցեղերի խառնուրդի հետեւանքով՝ մտած են հանուր լեզուի մէջ եւ ստեղծած են դրարարի հոլովման բաղձազան կարգը:

Փարով ու ձայնի տարազի վերջին ի-ին (iawı) մենք տեսանք, որ նա կարող է տալ եւ իրօք տալիս է ե՛ւ w եւ y, որով iawı դառնում է uow > vov եւ uoy > voy, այսինքն ու եւ ոյ, որոնք այդ իսկ պատճառով լծորդ են: Բայց vov տարազի w ձայնը նոյնպէս կարող է լինել մի խից, որ գոցած է մի նախադրական յօրանքը, փոխարինելով մի հին բաղձայն: Այս վարկածը կարող ենք ստուգել մեր «չուն» բարի վրայ:

Ու ձայնը համարելով vov՝ մենք «չուն» բառը գրում ենք իբր šown¹²: Մեր տեսութեան համաձայն w + բաղձայն լին խրմբերի մէջ չքացած է մի հին ձայնաւոր. այս դէպքում մի a: Վերականգնելով այդ ձայնաւորը մենք կը ստանանք šowan, հմմ. աւն/ւան > աւն/ւն, որով՝ շն/ւան > շն/ւն: Ես ասում եմ. այս բառի w ձայնը փոխարինում է մի հին բաղձայն, որ կարծում եմ եղած է b. հետեւապէս կարծում եմ, որ այդ բառն եղած է šoban, որ իր կազմութեամբ ներկայ դերբայ է եւ պէտք է տրոհուի իբր šób-an. հմմ. խած-ան, հաչ-ան, վագ-ան եւ այլն: Š — s լծորդութեամբ եւ մեր բառի արմատը — šob — գտնում եմ սլաւ sob-ák-a բառի մէջ, որ նշանակում է «չուն» եւ որի -ak- ածանցը կշիռն է մեր -an ածանցի եւ նոյն իմաստն ունի, հմմ. ուււ. ěd-ak- որ նշանակում է «ուտող» եւ ուր ěd- կշռում է

¹² Քանի որ հարցը վերաբերում է w ձայնին՝ մենք դիւրութեան համար ու ձայնը գրում ենք OW եւ ոչ VOW ձեւով, որ իր բուն տարազն է՝ հոլովովի որոշ փուլի համար:

մեր ուււ- եւ սնակ. ad- արմատներին, իսկ -ak- մեր -ու- ածանցի արժէքն ունի. հմմ. նաեւ հայ. գիւտ-ակ, որ նշանակում է գիւտող: Այսպէսով մեր եւ սլաւ բառերը ոչ միայն նոյն արմատն ունին, այլ եւ նոյն կազմութիւնն ունին, թէեւ գործ են ածում տարբեր ածանցներ (an, ak): Այս զուգադրութիւնը պարզ ցոյց է տալիս, որ մեր ու-ն մի OW է եւ որ նրա լ-ը (w) փոխարինում մի վաղեմի բաղձայն (b):

Հայ բառի շեշտն արմատի ձայնաւորի վրայ է, ուստի ածանցի ձայնաւորը, որ գալիս է շեշտից յետոյ, սղած ու չքացած է. šów-an > šówn. իսկ սլաւ բառի շեշտն ածանցի ձայնաւորի վրայ է, ուստի եւ նա՛ չի սղած. sob-ák-a: Բայց է մի սլաւ ցեղ, որ այս բառը շեշտած է հայի պէս, որի հետեւանքով բառը ենթարկուած է նոյն հոլովոյթին եւ տուած է նոյն արդիւնքը: Այսպէս՝ sób-ak-a. շեշտից յետոյ եւ երկու ձայնաւորի միջեւ b փոխարինուած է w ձայնով եւ բառը դարձած է sów-ak-a. միջանկեւ ձայնաւորը շեշտից յետոյ սղած ու չքացած է եւ բառը դարձած է sów-ka, իսկ ow խումբը՝ ինչպէս մեր լեզուում՝ տուած է ու եւ բառն եղած է súka, որ նշանակում է «էգ շուն, քած»: Ահաւասիկ հոլովոյթի զուգահեռ ծիրերը.

šób-an > šówan > sówn (չուն)
sób-ak-a > sów-ak-a > sów-k-a | sú-k-a¹³.

Այսպիսով լեզուական երկու տարբեր միջավայրեր «կազմած են» երկու բառ միեւնոյն կենդանին նիշելու համար: Իրօք սակայն յատուկ «կազմութիւն» չկայ. sob-ák-a եւ súka միեւնոյն բառերն են, բայց տարբեր շեշտադրութեան եւ հնչական տարբեր հոլովոյթի պատճառով նրանք տարբերացած են:

Բայց կայ աւելի հետաքրքրականը: Եղած է մի հայ ցեղ, որի համար sob-ak- նշանակած է «չուն» եւ որ այդ բառը շեշտելով արմատի վրայ՝ հասած է նոյն արդիւնքին ինչ որ սլաւոնը. այսպէս՝ sób-ak > sów-ak > sówk > súk: Բառի այս ձեւը ես գտնում եմ մեր «սկունգ» բառի մէջ, որ կազմուած է ինչպէս ծնունդ, սերունդ եւ նման բառերը եւ որ պէտք է տրոհուի իբր սկ-ունդ: Սկ բաղձայն խմբի մէջ սղած է կարծում եմ մի վաղեմի ու, որով բառը պէտք է վերականգ-

¹³ Այստեղից երեւում է, որ սլաւ ու ձայնը եւս բաղձար է մերինի նման:

նել իբր սուկ-ունդ. իսկ սուկ լրիւ կշիռն է սլաւ súk — արմատի: «Սկունգ» նշանակում է «չուն, շնիկ»:

Այսպէս ուրեմն մենք կարող ենք ասել, որ մեր ու-ն մի հին uow է եւ որ նրա լ-ը եթէ մի նախաւոր ի-ն սղում չէ, ասպա մի խից է, որ փոխարինում է մի հին բաղձայն:

Մենք հիմա կարող ենք մէկտեղել մեր դտած տարազները, որ վերաբերում են ու եւ ու ձայների ծագման եւ հոլովոյթին:

$$\begin{aligned} \text{Ո} \left\{ \begin{array}{l} \text{iaw} \\ \text{c} + \text{aw}^1 \\ \text{iac} \\ \text{iā} > \text{iaw} \end{array} \right\} & \left\{ \begin{array}{l} \text{uaw} > \text{uo}^2 > \text{vo}^3 > \text{o}^4 \\ \text{uoi} > \text{uo}^2 > \text{vo}^3 > \text{o}^4 \end{array} \right. \\ \text{Ու} \left\{ \begin{array}{l} \text{iawi} \\ \text{ia} + \text{c} + \text{i} > \text{iawi} \\ \text{c} + \text{awi} > \text{uawi} \\ \text{iāi} > \text{iawi} \end{array} \right\} & \left\{ \begin{array}{l} \text{uow}^5 > \text{vow} > \text{vu}^6 > \text{u}^7 \\ \text{uoy}^8 > \text{voy} > \text{oy}^9 \parallel \text{uy}^{10} \parallel \text{o}^{11} \end{array} \right. \end{aligned}$$

1. C գիրը նիշում է մի բաղձայն, որին փոխարինում է u, որ յետագային դարձած է v. uotən > votən — ուտն: — 2. ու ձայնի դասական արտաբերութիւնը, որ մնացած է մի քանի բարբառներում (Բաղէշ եւ այլուր): — 3. ու ձայնի այսօրուան արտաբերութիւնը դրական լեզուի եւ բաղձաթիւ բարբառների մէջ բառասկզբին. որ, ուսպ եւ այլն: — 4. ու ձայնի արտաբերութիւնը դրական լեզուում եւ բաղձաթիւ բարբառների մէջ բառամիջին եւ մի քանի բարբառների արտաբերութիւնը բառասկզբին. մօլոք, բօլօք, օսկի, օսկօն եւ այլն: — 5. ու ձայնի դասական արտաբերութիւնը: — 6. ու ձայնի դասական արտաբերութիւն (չատ հազաւառական արտաբերութիւն (չատ հազաւառական արտաբերութիւնը բոլոր բարբառներում եւ դրական լեզուի մէջ՝ բառասկզբին, վերջին եւ միջին: — 8. ոյ խմբի դասական արտաբերութիւնը: — 9. ոյ խմբի դրական եւ բարբառական արտաբերութիւնը բաղձաթիւնի բառերի միջին. գոյական. եւ Քեսաբցու արտաբերութիւնը. loys (լոյս): — ոյ խմբի դրական արտաբերութիւնը միավանկ բառերի մէջ. luys (լոյս): — 10. ոյ խմբի դրական եւ բարբառական արտաբերութիւնը բաղձաթիւնի վերջին. գործօ, եսօ (գործոյ, յետոյ):

Տարազներից ամէն մէկը պատկերացում է հնչական հոլովոյթի մի փուլ. սկզբը դրուած են հնադոյն տարազները: Նրանց յաջորդական շարքը ցուցադրական արժէք ունի միայն: Նրանք ցոյց են տալիս, որ ու եւ ու ձայների կազմութիւնն այդ փուլերով է անցած, բայց թէ ո՞ր փուլը որից յետոյ է եկած՝ այդ հարցը մանր քննութեամբ միայն կարող է լուծուիլ: Մեր նպատակն եղած է ցոյց տալ, որ այդ ձայները բաղադր են եւ կազմուած են շեշտական եւ հնչական որոշ օրէնքների ազդեցութեան տակ:

Այս տարազների կիրարկութեան ժամանակ պէտք է սկսել վերջից եւ աստիճանաբար բարձրանալ դէպի ձայների նախնական վիճակը, որ արտայայտում են առաջին տարազները: Նրանց օգնութեամբ կարելի է վերականգնել բառերի եւ ձեւերի նախաւոր կերպարանքը: Երբ վերականգնում ենք այնպիսի մի վաղեմի ձեւ, որից օրինապէս կարող էին ծագել մեր քննած տարատեսակ բառերն ու ձեւերը, դա նշանակում է, որ նրանց տարբերացումն սկսուած է հոլովոյթի ա՛յդ փուլից: Այսպիսով մենք կարող ենք որոշել բառերի եւ ձեւերի համեմատական հնութիւնը եւ վերականգնել լեզուի զարգացման նախադրական փուլերը:

Մեր դտած տարազները կիրարկելի են հնդեւրոպական լեզուների մեկնութեան համար: Յաջորդ անգամ մենք կը փորձենք մեկնել մեր եւ օտար լեզուների կնճռոտ երեւոյթներին մի քանիսը, ցոյց տալու համար մեր մշակած տարազների բացատրական կարողութիւնը: Մենք չենք սպասած ու եւ ու ձայնների փոխանցումների շարքը: Մեր տարազների կիրարկութեան ընթացքին առիթ կ'ուրենանք նոր փոխանցումներ մատնանշելու:

Ն. ԱՂԱՎԵԱՆ

